Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հրահանգ №1-24 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը ուր դրել եք X նշանը և այնուհետ նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Ի՞նչն է պայմանավորել Իսրայելի Միացյալ թագավորության երկու մասի բաժանելը մ.թ.ա. X դարավերջին:

ա. Եգիպտոսի հարձակումները

բ. Դավիթ թագավորի կողմից կազմած կտակը

գ. Բաբելոնի թագավորության հետ երկարատև պատերազմները

դ. Սողոմոն թագավորից հետո սկսված երկպառակությունը

2. Ո՞ր պատմական գործընթացի արդյունքն է պատկերված նկարի վրա տարբերվող գույնով:

ա. Փյունիկյանների գաղութացումը

բ. Աքեմենյան Իրանի էքսպանսիան

գ. Հունական գաղութների հիմնադրումը

դ. Հռոմեացիների հաղթանակը Պունիկյան պատերազմներում

3. Ինչի՞ հետ է կապված Աթենքի փիլիսոփայական դպրոցի անվանումը՝ Ակադեմիա:

ա. Քաղաքի

բ. Առասպելական հերոսի

գ. Ուսուցման մեթոդի

դ. Ուսումնարանը հիմնադրողի

4. Ո՞ր կարծիքն է ճիշտ կապված Հռոմեական պետությունում միապետական կառավարման փոփոխման հետ:

ա. Պատրիկները, որոնցից ընտրում էին թագավորներին, կամավոր զիջեցին քաղաքական իշխանությունը հօգուտ պլեբեյների

ծ. Հռոմեացիները չհանդուրժեցին միանձնյա կառավարումը և ամբողջ իշխանությունը փոխանցեցին Սենատին

գ. Ժողովրդական տրիբունները հրավիրեցին Սենատ, որը հետագայում հիմնադրեց հանրապետական կառավարում:

զ. Մեկ անձի կողմից անհնար դարձավ կառավարել էքսպանսիայի հետևանքով ստեղծված ընդարձակ պետությունը:

5. Ո՞ր դատողությունն է ճիշտ «Սալիկյան օրենքի» մասին:

ա. Օրենքների այս գիրքը գրվել է ֆրանկների թագավոր Խլոդվիգի կառավարման օրոք:

բ.Այս օրենքները Հռոմի Պապի հրամանով տարածվեցին ֆրանկների շրջանում նրանց քրիստոնեացումից հետո:

գ. Օրենքների այս ժողովածուն թարգմանվեց ֆրանկների թագավորության մաժորդոմ՝ Կարլոս Մարտելի հրամանով

դ. Այս օրենսգիրքը ֆրանկների շրջանում հաստատել է Կարլոս Մեծ կայսրը:

6. Ո՞ր կայսրի անվան հետ է կապված նկարի վրա պատկերված տաճարի շինարարությունը:

ա. Կոստանդիանոս Մեծի

բ. Թեոդոսիոս Առաջինի

գ. Հուստինիանոս Մեծի

դ. Հերակլես կայսրի

7. Իսլամական ճարտարապետության ո՞ր հուշարձանն է պատկերված նկարի վրա:

ա. Քաաբան Մեքքայում

բ. Ալիի դամբարանը

գ. Բաղդադի Մեդրեսեն

դ. Օմարիի մզկիթը

8. Ի՞նչը պայմանավորեց Աշոտ Կյուրոպաղատի գործունեության շարունակումը Հարավ-Արևմտյան Վրաստանում VIII դարավերջին և IX դարասկզբին:

ա. Խալիֆայի կողմից Տաո-Կլարջեթին հպատակեցնելն ու այս տարածաշրջանում Աշոտին կառավարիչ նշանակելը

բ. Բյուզանդիայի կողմից Տաո-Կլարջեթիում վարած ժողովրդագրական էքսպանսիան, որին Աշոտը հակադրեց շինարարական գործունեությունը:

գ. Արաբների կողմից Աշոտին Քարթլիից վտարումը, ինչից ելնելով նա ստիպված էր հաստատվել Տաո-Կլարջեթիում:

դ. Տաո-Կլարջեթին գրավելու նպատակով աբխազների թագավորի կողմից սկսած արշավանքները, ինչին դեմ դուրս եկավ Աշոտը

9. Ո՞րն էր ասպետի կոչում շնորհելու անհրաժեշտ նախապայմանը միջնադարյան Եվրոպայում:

ա. Սեփականության մեջ բերդ-ամրոց ունենալը

ծ. Կարդինալի թույլտվությունը

գ. Հոգևոր միաբանության անդամությունը

դ. Ազնվական ծագումը

10. Ո՞ր պատմական իրադարձության հետ է կապված Կանոսայի բերդ-ամրոցը:

ա. Հարյուրամյա պատերազմի

բ. Խաչակրաց արշավանքների

գ. Բարեփոխումների շարժման

դ. Ինվեստիտուրայի համար պայքարի

11. Մատենագրի փոխանցմամբ, «Մի օր այրեցին Քութայիսին, Արտանուջը և Կլարջեթիի անապատները ... Ավերեցին երկիրն ու ոչնչացրեցին անտառներում, ժայռերում, քարանձավներում և երկրի խոռոչներում գտնվող բոլոր մարդկանց... Քորոնիկոնի երեք հարյուրն էր... Իսկ նրանք, ովքեր ողջ էին մնացել Մթիուլեթիում կամ ամրոցներում, կործանվեցին ձմռան սաստիկ ցրտից և սովից»: Ո՞ր նվաճողների մասին է խոսում հեղինակը:

ա. Արաբների

բ. Մոնղոլների

գ. Սելջուկների

դ.Պարսիկների

12. Որտե՞ղ տեղափոխվեց Երուսաղեմի թագավորության մայրաքաղաքը 1187 թվականին քրիստոնյաների կողմից Երուսաղեմը կորցնելուց հետո:

ա. Աքրա

բ. Եդեսիա

գ. Անտիոք

դ. Տրիպոլի

13. 1534 թվականին ընդունած «Սուպրեմացիայի ակտով», ո՞վ հռչակվեց Անգլիայի եկեղեցու կառավարիչ:

ա. Ուելսի արքայազնը

բ. Անգլիայի թագավորը

գ. Վեստմինստերի Կարդինալը

դ. Քենթերբերիի արքեպիսկոպոսը

14. 1683 թվականին Յան Սոբեսկու գլխավորությամբ եվրոպացի քրիստոնյաների բանակը մեծ պարտության մատնեց օսմանցիների զորքին: Ո՞րն էր այս ճակատամարտի արդյունքը:

ա. Կոալիցիոն բանակի համար ճանապարհ բացվեց դեպի Կոստանդնուպոլիս

ծ. Ստեղծվեց նոր պետություն՝ Սրբազան Հռոմեական կայսրությունը

գ. Վերականգնվեց Սերբիայի անկախ թագավորությունը

դ. Օսմանցիները ստիպված եղան հանել պաշարումը Վիեննայից

15. Ո՞րն էր Կոնստանտին Մահմադ Ղուլի Խանի կողմից, լեկերի վարձած բանակով, Թբիլիսին գրավելու արդյունքներից մեկը:

ա. Ղզլբաշության հաստատումը Քարթլիում

բ. Վախթանգ VI-ի գաղթեցումը Ռուսաստան

գ. Քարթլի-Կախեթիի միավորումը

դ. Օսմանցիների վտարումը Թբիլիսիի ամրոցից

16. Ո՞ր վրացի պատմաբանն է մեծացել Ռոստոմ թագավորի արքունիքում և մի ժամանակ գրավել նաև Սպահանի տարուղայի պաշտոնը:

ա. Փարսադան Գորգիջանիձեն

բ. Վախուշտի Բատոնիշվիլին

գ. Պապունա Օրբելիանին

դ. Սեխնիա Չխեիձեն

17. Մյուս պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը նպաստեց Նապոլեոնի հարյուր օրով իշխանություն վերադառնալուն:

ա. Բրիտանական նավատորմի կողմից Ֆրանսիայի ափամերձ տարածքների շրջափակման դադարեցումը

ծ. Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ի հակաեվրոպական դիրքորոշումը

գ. Լյուդովիկոս XVIII-ի կողմից ռեստավրացիայից հետո վարած քաղաքականությունը

դ. Վիեննայի կոնգրեսի կողմից մշակած վերջնական հռչակագրի պայմանները

18. Ո՞ր դատողություն է ճիշտ կապված Կովկասի փոխարքա Միխեիլ Վորոնցովի գործունեության հետ:

ա. Հրաժարվեց նախկինում առկա ուժային քաղաքականությունից և անցկացրեց համեմատաբար լիբերալ միջոցառումներ, որոնց վերջնական նպատակը Կովկասի ինքնավարության ստեղծումն էր

բ. Ամբողջ շեշտը դրեց Հյուսիսային Կովկասի հնազանդեցման վրա, ակտիվորեն ներգրավեց այդ պայքարին վրացիներին և կարողացավ կալանավորել Իմամ Շամիլին

գ. Մշակեց փոխզիջման քաղաքականություն վրացի թավադ-ազնվականների հետ հարաբերություններում, ինչից հետո նրանց տրվեց զինվորական ծառայության մեկնարկի իրավունք

դ. Որոշ չափով փոխեց նախորդողների քաղաքականությունը, տարբեր միջոցառումներով փորձեց շահել վրաց ազնվականության սիրտը, ինչն ի վերջո նրան հաջողվեց

19. 1871 թվականին Վիկտոր Էմանուել II-ը հանդիսավորությամբ մուտք գործեց Հռոմ: Ինչպե՞ս է կոչվում գործընթացը, որն ավարտվեց այդ իրադարձությամբ:

ա. Ռեպատրիացիա

բ. Ռեպարացիա

գ. Ռեկոնկիստա

դ.Ռիսորջիմենտո

20. Ո՞ր իրադարձությունն է համարվում Ֆրանսիայի երրորդ հանրապետությունում գոյություն ունեցող քաղաքական ճգնաժամի դրսևորում:

ա. «Էմսի հեռագիրը»

բ. «Սև հինգշաբթին»

գ. «Արյունոտ կիրակին»

դ. «Դրեյֆուսի դատը»

21. Ո՞ր քաղաքական կուսակցության հիմնադիրներից և առաջնորդներից մեկն էր Արչիլ Ջորջաձեն:

ա. Սոցիալիստ-ֆեդերալիստների

բ. Սոցիալ-ժողովրդավարների

գ. Սոցիալիստ-հեղափոխականների

դ. Ազգային- ժողովրդավարների

22. Ո՞ր գեղարվեստական ստեղծագործությունն է արտացոլում Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանը:

ա. Միխեիլ Զավախիշվիլիի «Կնոջ ճակատագիրը»

բ. Էրիխ Ռեմարկի «Արևմտյան ռազմաճակատում անփոփոխ է»

գ. Էռնեստ Հեմինգուեյի «Ո՞ւմ մահն է գուժում զանգը»

դ. Կոնստանտին Գամսախուրդիայի «Լուսնի առևանգումը»

23. Ի՞նչով էր որոշվում Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունում որոշ տարածաշրջաններին տեղական ինքնավարություն շնորհելը:

ա. Համընդհանուր հանրաքվեի հետևանքով

բ. Վրաստանի Հանրապետության սահմանադրությամբ

գ. Հիմնադիր ժողովի որոշմամբ

դ. Կառավարության հատուկ հրամանով

24. Ո՞ր իրադարձությունն է գնահատել Ուինսթոն Չերչիլը հետևյալ արտահայտությամբ՝ «Եթե կառավարությունը, ընտրություն կատարելով պատերազմի և խայտառակության միջև, ընտրում է խայտառակությունը, ապա նա ստանում է և՛ պատերազմ, և՛ խայտառակություն:

ա. Լեհաստանի բռնազավթումը

բ. Մոլոտով-Ռիբենտրոպի պակտը

գ. Ավստրիայի անշլյուսը

դ. Մյունխենի համաձայնագիրը

Հրահանգ №25-28 առաջադրանքների համար:
Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները կամ անհատներին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն անվանած իրադարձության կամ անհատի համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, համապատասխանաբար, վերջին՝ երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

25. Ժամանակագրական առումով դասավորեք ժողովուրդների մեծ արտագաղթի դարաշրջանում զարգացող իրադարձությունները:

1. Ճակատամարտ Կատալաունյան դաշտում
2. Ալարիխի արշավանքը Հռոմ
3. Ֆրանկների քրիստոնեացումը

26. Ժամանակագրական առումով դասավորեք քրիստոնեության պատմության հետ կապված իրադարձությունները:

1. Մեծ Սքիզմա
2. Պատկերամարտության սկիզբ
3. Կլերմոնի եկեղեցական ժողով

27. Ժամանակագրական առումով դասավորեք խաչակրաց արշավանքների ժամանակ տեղի ունեցող իրադարձությունները:

1. Դամիետայի պաշարումը
2. Ֆրիդրիխ Բարբարոսայի մահը
3. Հիվանդախնամների միաբանության հիմնադրումը

28. Ժամանակագրական առումով դասավորեք ԱՄՆ-ի պատմության հետ կապված իրադարձությունները:

1. Անկախության հռչակագրի ընդունումը
2. Վաշինգտոնի հռչակումը որպես մայրաքաղաք
3. Առաջին մայրցամաքային կոնգրեսի աշխատանքի ավարտը

Հրահանգ #29 առաջադրանքի համար:

Աշակերտին տրվեց քարտեզ: Սեփական գիտելիքի և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ առաջադրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից երկուսը (2) սխալ են պարունակում: Դուք պետք է գտնեք սխալները, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները:

Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

Առաջադրանք 29. Քարտեզն ու հարցերը տես հաջորդ էջերում

ყარაჩაი
ოვსეთი
ქისტეთი
ბაგარი
ბიჭვინთა
ზუგდიდი
ანაკოფია
ცხუმი
დრანდა
სათამაშია
ბედია
ფახულანი
ლენტეხი
ბურა
ცაგერი
ტუბა
ზანადა
ონი
ნიკორწმინდა
ხოტევი
ბაღდადი
ბაღდადი
ანაკლია
ხობი
ფოთი
ოზურგეთი
ქობულეთი
ბათომი
ბორჯომი
ახალციხე
ოძრხე
ახალქალაქი
ახალქალაქი
ბოლნისი
ბოლნისი
ბორჯომი
ბორჯომი
ბორჯომ

Աշակերտին ուղղված հարցերը	Աշակերտի տրված պատասխանները
29.1. Ո՞ր դարի իրավիճակն է պատկերված քարտեզի վրա:	**29.1.** XVII դարի
29.2. Ինչպե՞ս է կոչվում այն վրացական քաղաքական միավորը, որի տարածքը, ըստ քարտեզի, զավթել է Օսմանյան Կայսրությունը:	**29.2.** Ախալցիխեի փաշայություն
29.3. Անվանեք այն անձնավորությանը, ո՞րը քարտեզի վրա պատկերված ժամանակաշրջանում միացյալ Քարթլի-Կախեթիի թագավորն էր:	**29.3.** Թեյմուրազ I
29.4. Անվանեք վրաց քաղաքական գործչին (բացի թագավորից), որի անունը կապված է քարտեզի վրա նշված ճակատամարտերի հետ:	**29.4.** Գիորգի Սաակաձե
29.5. Քարտեզի համաձայն, անվանեք երկու վրացական թագավորություն, որոնց սահմանակից էր Օսմանյան Կայսրության կողմից զավթած վրացական քաղաքական միավորը:	**29.5.** Քարթլի, Իմերեթի
29.6. Քարտեզի համաձայն, անվանեք վրացական իշխանությունները, որտեղ առկա էին կաթոլիկ միսիոններ:	**29.6.** Իմերեթի, Սամեգրելո

Հրահանգ № 30 առաջադրանքի համար:
Ուշադիր վերլուծեք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանեք տրված հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 30: Նկարներն ու հարցերը տես հաջորդ էջերում

Առաջադրանք 30.

N1 

N3

N2 

հարցերը տես հաջորդ էջում

Նկարի վրա պատկերված են XX դարի երկրորդ կեսին Եվրոպայի քաղաքներից մեկում զարգացած պատմական գործընթացի դրվագները:

(2) **30.1**. Ո՞ր քաղաքում զարգացող պատմական իրադարձություններն են պատկերված նկարի վրա և ի՞նչն է պայմանավորել նշված իրադարձությունների զարգացումը հենց այս քաղաքում:

(2) **30.2.** Ո՞ր նկարի վրա է պատկերված տվյալ պատմական գործընթացի ամենավաղ փուլը: Պատասխանը հիմնավորեք նկարի վրա առկա տեղեկության համաձայն:

(2) **30.3.** Ո՞ր նկարի վրա է պատկերված տվյալ պատմական գործընթացի ամենաուշ փուլը և ձեր կարծիքով, ի՞նչ եզրակացություն է հնարավոր անել նկարի վրա առկա տեղեկությունից ելնելով:

(1) **30.4.** Անվանեք մեկ կոնկրետ դասային թեմա, որի ժամանակ կկիրառեիք ներկայացված նկարները:

Հրահանգ # 31 առաջադրանքի համար:
Ուշադիր ընթերցեք ստորև ներկայացված պատմական փաստաթուղթը, ըմբռնեք տեքստը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 19:

Առաջադրանք 31: Պատմական փաստաթուղթն ու հարցերը տես հաջորդ էջերում

31. Հատված գեներալ Իլյա Օդիշելիձեի «Ինչպես ծագեց վրացական բանակը» նամակից:

Համաշխարհային պատերազմի ժամանակ կենտրոնական պետությունների դեմ Վրաստանը Ռուսաստանի բանակ ուղարկեց 180.000-200.000 մարդ: Այս թվում հաշվում եմ նաև կամավորներին, սակայն չեմ հաշվում վրացի սպաներին ու գեներալներին, որոնք մեծ թվաքանակ էին կազմում Ռուսաստանի բանակում: Այստեղ հաշվում եմ միայն քրիստոնյա վրացիներին, քանի որ վրացի մուսուլմանները ազատված էին զինվորական պարտականությունից:

Երբ Ռուսաստանի հեղափոխության ընթացքում հստակորեն դրսևորվեց բոլշևիկյան հոսանքը, դա արտացոլվեց ռուսական բանակի վրա, ուր նույնպես հստակորեն դրսևորվեց պատերազմը շտապ ավարտելու ցանկությունը և բանակը սկսեց փլուզվել: 1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակ տարավ բոլշևիզմը: Անզսպելի բոլշևիկյան քարոզչության ազդեցության ներքո դիվիզիաներն ու զորաբանակները հրաժարվում էին ենթարկվել իրենց հրամանատարներին, թալանում էին սեփական ունեցվածքը և նրա մեծ մասը թողնում հակառակորդին: Նրանք անկարգաբար սկսեցին լքել ռազմաճակատը: Ինչպես բոլորին լավ հայտնի է, Ռուսաստանի համար այդ իրադարձությունները հանգեցրին ողբերգական հետևանքների: Այդ հետևանքները առանձնակիորեն ողբերգալի էին Անդրկովկասում ևս, հիմնականում վրացիների և հայերի համար: Կանխատեսելով այս մեծ վտանգը, վրացիներն ու հայերը, բոլշևիկների վերջնական տրիումֆից մի քանի ամիս առաջ Տֆիլիսիում հարց բարձրացրեցին վրացական և հայկական ազգային զորամասերի կազմավորման հետ կապված:

Հայերը, նախքան այդ, Ռուսաստանի բանակի կազմում արդեն կարողացել էին ստեղծել մի քանի ազգային գումարտակ: Վրացիներն ևս ունեին հեծյալ գունդ: Դեռևս 1917 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կերենսկիի կառավարությունը ստիպված եղավ

տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

անցնել հարցերին. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

տալ իր համաձայնությունը ազգային զորամասերի կազմավորման հետ կապված, սակայն տեղական՝ Կովկասյան հեղափոխական զինվորական իշխանությունը, ի դեմս ռազմաճակատի կոմիսար Դոնսկոյի, ի սկզբանե բացահայտորեն դեմ էր այդ գաղափարին: Մասնավոր շրջանակներում նա հայտարարում էր, որ Կովկասն անհապաղ արյան մեջ կխեղդի, քան թույլ կտա կազմավորել ազգային զորամասեր: Բոլշևիկների հաջողությունների և Ռուսաստանի բանակի փլուզմանը զուգահեռ նրա դիրքորոշումը հետզհետե մեղմանում էր և վրաց ազգայնականներին նույնիսկ բանավոր խոստումներ էր տալիս: Հոկտեմբերի առաջին կեսին նա դեռ դեմ էր Կովկասում ազգային զորամասերի կազմավորմանը և կուսակցական օղակներում ասում էր, որ վրացիներից և այլ ազգություններից խնդրագրեր ու նամակներ է ստանում, սակայն դրանք մահուդի տակ է դնում և Կովկասում երբեք ոչ-ոք չի տեսնի ազգային զորամասեր: Իրադարձություններն ընթանում էին հակառակ Դոնսկոյի կամքի, ինչից ելնելով անհրաժեշտ դարձավ շտապ կազմավորել ազգային զորամասեր: Թույլտվությունն այնքան ուշ տրվեց, որ ազգային զորամիավորումները չկարողացան փոխարինել Կովկասյան ռազմաճակատի այն ռուսական զորամասերը, որոնք ինքնակամ լքում էին ռազմաճակատը:

Միայն 1917 թվականի հոկտեմբերի վերջին իրականում թույլ տվեցին սկսել ազգային զորամասերի կազմավորումը: Իսկ 1918 թվականի հունվարի վերջին ստացա հակառակորդի գերագույն հրամանատարի հեռագիրը, որ նա խախտում է զինադադարը և սկսում հարձակումը:

Ե՛վ վրացիները, և՛ հայերը նախքան հակառակորդի հարձակումն ունեին միայն փոքր զորամասեր: Կորպուսները բաղկացած էին 200-300 հոգանոց զորագնդերից, որոնք ավելի կարող էինք անվանել ապաշարային ջոկատներ, բայց ոչ զորագնդեր: Ահա, միակ պատճառը, թե ինչու չդիմացավ թուրքերի հարձակմանը ոչ Էրզերումը, ոչ Ղարսը, ոչ Ալեքսադրապոլը, ոչ էլ

տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

անցնել հարցերին. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

Բաթումին և ինչու դիմեցին փախուստի նրանց կայազորները հակառակորդին թողնելով ամրոցները:

Հայերն իրենց զորքը կարգավորելու հարցում, վրացիների համեմատ միշտ ունեին որոշակի առավելություններ: Դեռևս հեղափոխությունից առաջ, օգտվելով Կովկասի փոխարքայի կողմից նրանց նկատմամբ ունեցած բարյացակամությունից, նրանք կազմավորեցին մի քանի առանձին գումարտակ, որոնք բավարար ժամանակ ունեին հզորանալու, վարժվելու և մարտական փորձ ձեռք բերելու համար: Այս զորամասերը դարձան հիմք և պայմանավորեցին հայկական կորպուսի արագ կազմավորումը, վրացական կորպուսի հետ համեմատ:

Վրացական կորպուսը չուներ նաև ժամանակի հետ կապված այն առավելությունը, որն ուներ հայկական կորպուսը: Կորպուսը սկսեց ձևավորվել այն ժամանակ, երբ հայկական կորպուսն արդեն կազմավորված էր: Այդ պատճառով Բաթումին պաշտպանում էր ոչ թե անձամբ վրացական կորպուսը, որն այն ժամանակ գոյություն ուներ միայն թղթի վրա, բառիս բուն իմաստով, այլ շտապ, հանպատրաստից հավաքված, առանձին փոքր ջոկատները: Բաթումին անկում ապրեց և դա ուներ միայն մեկ դրական արդյունք՝ բոլորի համար ակնհայտ դարձավ, որ բանակին պետք է տրամադրել առավել ուշադրություն և ռեսուրս: Բանակ ստեղծելու, հզորացնելու և վարժեցնելու աշխատանքը դարձավ ավելի ինտենսիվ: Բարեբախտաբար, ստացվեց այնպես, որ ռուսական բանակում ծառայող գրեթե բոլոր վրացի սպաներն ու գեներալները, չանցան ռուսական բոլշևիզմի ծառայության մեջ, լքեցին Ռուսաստանը և վերադարձան հայրենիք ու սրտանց կանգնեցին այն պետական կանոնակարգի կողմը, որը լիովին գիտակցելով ընտրեց իր համար վրաց ժողովուրդը: Դա հնարավորություն ընձեռեց Վրաստանի կառավարությանը, առանց վախենալու օգտագործել բոլոր սպաներին ու գեներալներին, յուրաքանչյուրին իր մասնագիտությամբ և կարողությամբ և հզորացնել բանակի հետ կապված աշխատանքը:

անցնել հարցերին. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

հարցերը տես հաջորդ էջերում

Հարցեր.

(1) **31.1.** Անվանեք այն պետությունները, որոնք տեքստում հիշատակվում են, որպես «կենտրոնական պետություններ»:

(1) **31.2.** Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին վրացի մուսուլմանները ազատված զինվորական պարտականությունից:

(1) **31.3.** Բերեք մեջբերում փաստաթղթից, որից հստակ երևում է, որ գեներալ Օդիշելիձեն ներկայացված դեպքերի ակտիվ մասնակիցն էր:

(1) **31.4.** Փաստաթղթի համաձայն, անվանեք մեկ գլխավոր հանգամանք, որը «հնարավորություն ընձեռեց Վրաստանի կառավարությանը, առանց վախենալու օգտագործել բոլոր սպաներին և գեներալներին»:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) **31.5.** Ամբողջությամբ թվարկեք, թե ի՞նչ էին անում բոլշևիկյան ազդեցության ներքո գտնվող զորամիավորումները:

(2) **31.6.** Ըստ աղբյուրի, ո՞ւմ համար էր հատկապես ծանր Ռուսաստանի և Օսմանյան կայսրության ռազմաճակատում ստեղծված իրավիճակը և ինչո՞ւ:

(2) **31.7.** Ըստ փաստաթղթի, ինչո՞ւ էր մեծ ազդեցություն գործում Դոնսկոյը և ձեր կարծիքով, ինչո՞ւ էր նա դեմ ազգային զորամիավորումների ստեղծմանը:

(2) **31.8.** Ըստ աղբյուրի, նկարագրեք ինչպե՞ս էր փոփոխվում Դոնսկոյի դիրքորոշումը ազգային զորամիավորումների հետ կապված և ո՞ր կոնկրետ իրադարձությունները դարձան այդ փոփոխությունների պատճառ:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) **31.9.** Ըստ փաստաթղթի, ո՞րն էր Բաթումիի անկման պատճառը և ի՞նչ դրական արդյունք հետևեց դրան:

(2) **31.10.** Ինչո՞ւմ էր կայանում հայերի առավելությունը ազգային զորամիավորումների ստեղծման գործում և գեներալ Օդիշելիձեի կարծիքով ո՞րն էր դրա պատճառը:

(3) **31.11.** Անվանեք երեք կարևոր իրադարձություն, որտեղ Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության զինված ուժերը հասան հաջողության:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

Հրահանգ # 32 առաջադրանքի համար:
Ուշադիր ընթերցեք ստորև տրված առաջադրանքը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Բոլոր հարցերին տվեք լիարժեք և սպառիչ պատասխան: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 32. Բանավեճի թեմայի սահմանում

(1) **32.1.** Ո՞ր կոնկրետ թեման քննարկելիս կկիրառեիք №31 առաջադրանքում տրված պատմական աղբյուրը՝ գեներալ Իլյա Օդիշելիձեի «Ինչպես ծագեց վրացական բանակը» նամակի հատվածը:

(1) **32.2.** Նախատեսելով դասին քննարկելիք թեմայի կարևորագույն հարցը, ձևակերպեք բանավեճի թեմայի վերնագիրը:

(2) **32.3.** Ձևակերպեք երկու այլընտրանքային դիրքորոշում, որոնք կարող են առաջանալ բանավեճի ընթացքում: